ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ապրիլի 2026 թվականի №-Ա

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի №79-Ա ԵՎ ՄԱՐՏԻ 22-Ի №88-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի մարտի 10-ի №79-Ա և մարտի 22-ի №88-Ա որոշումների 2-րդ կետերով հաստատված՝ «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվությունների (այսուհետ՝ Թույլտվություններ) պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերությանը պարտավորեցվել է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հետ նախապես համաձայնեցված բնակավայրերում՝ կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու միջոցով առնվազն 500-ական միլիոն դրամի (ընդհանուր 1 միլիարդ) կապիտալ ներդրումների իրականացմամբ զարգացնել կապի ենթակառուցվածքները, և սահմանվել է, որ սույն պարտավորությունների կատարումը Հանձնաժողովը գնահատում է Նախարարության համապատասխան տեղեկատվության և Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված՝ անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացության արդյունքների հաշվառմամբ,

բ) Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարման վերաբերյալ Հանձնաժողովին պարբերական ներկայացվող տեղեկատվության շրջանակում Ընկերությունն իր 2025 թվականի դեկտեմբերի 29-ի №3128/25-1 գրությամբ նշել է, որ սահմանված ժամկետում

ավարտվել են Նախարարության հետ համաձայնեցված բնակավայրերի ցանկով նախատեսված՝ ֆիքսված օպտիկամանրաթելային /FTTH/ ցանցի կառուցման համար ընտրված 21 բնակավայրերում ցանցի կառուցման աշխատանքները, իսկ բջջային կայանների կառուցման համար նախատեսված 10 բնակավայրերից 6-ում՝ բջջային կայանների աշտարակների և օժանդակ ենթակառուցվածքների շինարարական աշխատանքները, որոնց մասով սարքավորումների տեղակայումը կավարտվի ու կայանները եթեր կհեռարձակվեն մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը: Մնացած 4 (Գեղաքունիքի մարզի Շատվան, Տրետուք, Դարանակ և Սյունիքի մարզի Իշխանասար) բնակավայրերի առնչությամբ նշվել է, որ այդ բնակավայրերում հիմնական բջջային կայանների կառուցման գործընթացների շրջանակում համապատասխան թույլտվությունները և վարչական մարմինների որոշումները մինչ օրս չեն ստացվել և Ընկերությունից անկախ հանգամանքներով պայմանավորված՝ տվյալ բնակավայրերում բջջային կայանների շինարարական աշխատանքները սահմանված ժամկետում հնարավոր չի եղել իրականացնել: Նշվել է, որ Ընկերության կողմից տվյալ բնակավայրերում հողատարածքների ձեռքբերման շուրջ բանակցությունները սկսվել են դեռևս 2024 թվականին, իսկ դրանց նպատակային նշանակության փոփոխության և շինարարության թույլտվության տրամադրման գործընթացները նախաձեռնվել են Իշխանասարում՝ 2025 թվականի հուլիսի 9-ին, Շատվանում՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-ին, Դարանակում՝ 2024 թվականի սեպտեմբերի 26-ին, Տրետուկում՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-ին: Սիսիան համայնքի հետ բազմաթիվ հանդիպումներից և երկարատև բանակցություններից հետո, 2025 թվականի հուլիսի 9-ին միայն իրականացվել է ընտրված հողատարածքի չափագրումը, որից հետո, փաստաթղթերի լիարժեք փաթեթով հողամասը ձեռք բերելու խնդրանքով Ընկերությունը դիմել է Սիսիան համայնքին, սակայն, համայնքը դիմումը չի ընդունել և շարունակական անարդյունք բանակցություններից հետո, 2025 թվականի սեպտեմբերի 12-ին Ընկերությունը դիմել է Սյունիքի մարզպետին, խնդրելով նրա համաձայնությունն ու օժանդակությունը հողամասը ձեռք բերելու վերաբերյալ (գրության պատճենն ուղարկվել է նաև Հանձնաժողով): Սյունիքի մարզպետարանից պատասխան չստանալով, 2025 թվականի հոկտեմբերի 6-ին թարմացված հատակագծով Ընկերությունը կրկին դիմել է Սիսիանի համայնքապետարան, ստացել Սիսիան համայնքի դրական արձագանքը հողատարածքի տրամադրման վերաբերյալ, ինչից հետո ձեռնամուխ եղել հողատարածքի գնման համար անհրաժեշտ փաստաթղթավորման

աշխատանքներին և համայնքի կողմից հողի համայնքային սեփականության վկայական ստանալուց հետո միայն հնարավոր կլինի դիմել համայնքին՝ հողի նպատակային նշանակության փոփոխության գործընթացը սկսելու խնդրանքով: Դարանակ բնակավայրում տեղազննության աշխատանքները սկսվել են դեռևս 2024 թվականի սեպտեմբերին: Հաշվի առնելով, որ ռադիոպլանավորման տեսակետից բջջային կայանի տեղակայման համար բարենպաստ հողատարածքի մի մասը անտառային է, 2024 թվականի սեպտեմբերի 26-ին հողատարածքի վարձակալության տրամադրման խնդրանքով Ընկերությունը դիմել է «Սևան Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ին և մինչ այժմ պաշտոնական գրավոր պատասխան չի ստացվել, փոխարենը Ընկերությանը բանավոր կերպով փոխանցված տեղեկատվության համաձայն՝ անտառային տարածքներում հողհատկացման ընթացակարգը գտնվում է փոփոխման փուլում և Կառավարության կողմից նոր ընթացակարգի հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի հողատարածքի տրամադրումը: Շատվան (Ջաղացաձոր) բնակավայրի մասով 2024 թվականի դեկտեմբերի 2-ին Ընկերությունը դիմել է Վարդենիս համայնքին՝ ընտրված հողատարածքի նպատակային նշանակության փոփոխության խնդրանքով: Հարցը շրջանառվել է միջգերատեսչական հանձնաժողովում, և 2025 թվականի մարտի 7-ին, իսկ այնուհետև նաև դեկտեմբերի 8-ին ստացվել են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից մերժում՝ հողատարածքի պատմական լինելու հիմքով (նշվածի վերաբերյալ նախարարությունն իր 2025 թվականի հոկտեմբերի 16-ի N01/14.3/34548-2025 գրությամբ հայտնել է նաև Հանձնաժողովին): Տրետուկ բնակավայրի մասով 2024 թվականի դեկտեմբերի 2-ին Ընկերությունը դիմել է Վարդենիս համայնքին՝ հողատարածքի նպատակային նշանակության փոփոխության խնդրանքով: Գեղարքունիքի մարզպետարանը փաստաթղթերի փաթեթը միջգերատեսչական հանձնաժողովին է ուղարկել 2025 թվականի փետրվարի 25-ին և համայնքը միջգերատեսչական հանձնաժողովի պատասխանը ստացել է միայն 2025 թվականի հունիսի 23-ին՝ փաստաթղթերի փաթեթի լրամշակման պահանջով, որի բովանդակությունը ամիսներ շարունակ պարզել հնարավոր չի եղել՝ համայնքում քննչական գործողությունների, համակարգիչների առգրավման և պաշտոնատար անձանց ձերբակալությունների պատճառով: Հետագայում պարզաբանումների արդյունքում միջգերատեսչական հանձնաժողովին լրամշակման փաթեթը ներկայացվել է 2025 թվականի սեպտեմբերին և դեռևս պատասխան չի ստացվել: Այդուհանդերձ, տվյալ 4 բնակավայրերում ևս, բջջային կապի ծածկույթն

ապահովված է Ընկերության այլ բջջային կայանների վրա լրացուցիչ սարքավորումների տեղակայման, կարգաբերման և այլ ժամանակավոր տեխնիկական լուծումներով: Ըստ Ընկերության՝ վերոնշյալ պարտավորությունների կատարման նպատակով Ընկերության կողմից իրականացվող կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը նախնական գնահատմամբ՝ կկազմի 1 076 000 000 (մեկ միլիարդ յոթանասունվեց միլիոն) դրամ: Նշվածով պայմանավորված՝ Ընկերությունը խնդրել է երկարաձգել նշված պարտավորությունների կատարման ժամկետը՝ մինչև 2026 թվականի օգոստոսի 31-ը,

գ) Հանձնաժողովը 2026 թվականի հունվարի 21-ի №ՄՄ/34.2-Ղ4-2/349-2026 գրությամբ դիմել է Նախարարություն՝ Ընկերության կողմից Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների մասով կատարված և չկատարված (ներառյալ՝ հնարավոր այլընտրանքային լուծումների համատեքստում) աշխատանքների, ինչպես նաև այդ կապակցությամբ տվյալ պարտավորությունների կատարումն Ընկերության կողմից հայցվող ժամկետով երկարաձգելու վերաբերյալ Նախարարության դիրքորոշումն ստանալու նպատակով, որի առնչությամբ վերջինս 2026 թվականի փետրվարի 5-ի №ՊՆ/510/1282-2026 գրությամբ նշել է, որ նկատի ունենալով խնդրո առարկա պարտավորությունների կատարման մասով Ընկերության պարզաբանումներն ու իրականացված աշխատանքներն ու խնդրի այլընտրանքային լուծումների հնարավորությունը՝ չի առարկում երկարաձգելու Ընկերության պարտավորությունների կատարման ժամկետը,

դ) Հանձնաժողովը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերի պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2026 թվականի հունվարի 21-ից վարչական վարույթ է հարուցել Ընկերության նկատմամբ, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2026 թվականի հունվարի 21-ի №ՄՄ/34.2-Ղ4-2/350-2026 գրությամբ,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2026 թվականի փետրվարի 2-ի №245/26-1 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարման շրջանակում Նախարարության հետ համաձայնեցված ցանկում ներառված՝ խնդրո առարկա 4 (Շատվան (Ջաղացաձոր), Տրետուկ, Դարանակ և Իշխանասար) բնակավայրերի մասով չնայած ձեռնարկված բոլոր միջոցներին՝ այդ բնակավայրերում կայանների կառուցման թույլտվությունների ստացման գործընթացը դեռևս

ավարտված չէ և Ընկերությունից անկախ պատճառներով, նշված բնակավայրերում շինարարական աշխատանքների իրականացումը սահմանված ժամկետներում դարձել է անհնարին: Ընկերությունը ձեռք է բերել վերոնշյալ 4 բջջային կայանների կառուցման համար անհրաժեշտ նյութերը և կայանների համար անհրաժեշտ սարքավորումները և շինարարության թույլտվությունները ստանալուց հետո անհրաժեշտ կլինի առավելագույնը մեկից մեկուկես ամիս, կախված եղանակային պայմաններից բոլոր 4 կայանների կառուցման, սարքավորումների մոնտաժման և եթեր հեռարձակելու համար: Ընկերությունը ներկայացրել է նաև վարչական մարմինների համապատասխան թույլտվություններն ու որոշումներն ստանալուն ուղղված Ընկերության գործողությունների ամբողջական ժամանակագրությունը, ձեռնարկված միջոցներն ու իրականացված քայլերը: Նշվել է նաև, որ նկատի ունենալով Ընկերությունից անկախ պատճառներով առաջացած վերոհիշյալ ձգձգումների հանգամանքն ու դրանով պայմանավորված ծածկույթի ապահովման պարտավորությունը սահմանված ժամկետում իրականացնելու անհնարինության ռիսկը, Ընկերության կողմից մշակվել և իրականացվել են ժամանակավոր տեխնիկական լուծումներ, որոնց արդյունքում նշված 4 բնակավայրերում ևս բջջային կապի ծածկույթն ապահովվել է: Հաշվի առնելով նշվածն ու այն հանգամանքը, որ սահմանված պարտավորություններն, ըստ էության, կատարվել են (որոշ դեպքերում Ընկերության կողմից մշակված և իրականացված ժամանակավոր տեխնիկական լուծումներով, որոնց արդյունքում Նախարարության հետ համաձայնեցված 4 բնակավայրերում բջջային կապի ծածկույթը ևս ապահովվել է), այսինքն Ընկերության կողմից ձեռնարկվել են Հանձնաժողովի որոշման կատարման ապահովմանն ուղղված և Ընկերությունից կախված հնարավոր բոլոր միջոցները, որը միտված է եղել թե՛ հնարավոր խախտումը բացառելուն, թե՛ մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանությանը, Ընկերությունը կարծում է, որ իր գործողություններում առնվազն բացակայել են մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, ուստի Հանձնաժողովին խնդրել է կարճել Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը,

զ) 2026 թվականի փետրվարի 23-ին Ընկերության և Նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել է քննարկում՝ Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարմանն առնչվող հարցերի վերաբերյալ, որի արդյունքներով 2026 թվականի մարտի 11-ի №573/26-1 գրությամբ Ընկերությունը

հայտնել է, որ չնայած գործադրած ջանքերին, խնդրահարույց 4, այն է՝ Դարանակ, Շատվան (Ջաղացաձոր), Տրետուք և Իշխանասար բնակավայրերում տեղական ինքնակառավարման մարմիններից կայանների շինարարության նպատակով հողերի ձեռքբերումը, դրանց նպատակային նշանակության փոփոխման գործընթացը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի համաձայն՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, ժամանակատար է: Շատ դեպքերում՝ միջգերատեսչական հանձնաժողովին ուղղված փաստաթղթերի փաթեթները լրամշակման և ճշգրտման նպատակով հետ են վերադարձվել, որն էլ դարձել է շինարարական աշխատանքները սահմանված ժամկետում կատարումն անհնարին դարձնող գործոն: Ընդ որում, տվյալ գործընթացի շրջանակում լրամշակման կամ ճշգրտման ենթակա փաստաթղթերի փաթեթները կազմվում են ոչ թե Ընկերության, այլ համապատասխան լիազոր մարմնի կողմից՝ այն քննարկելով պետական կառավարման մարմինների հետ և եթե առաջադրանքի նախագիծը չի բավարարում գործող կարգի պահանջներին և այն հնարավոր չէ աշխատանքային կարգով լրամշակել, ապա առաջադրանքի նախագիծը՝ համապատասխան հիմնավորումներով, լիազոր մարմնի կողմից հետ է վերադարձվում համայնքի ղեկավարին՝ լրամշակման, իսկ փաստաթղթերի լրամշակումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթն է, գործընթացներն իրականացվում են համայնքների կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի մասնակցությամբ և Ընկերությունը, դիմումներն՝ ըստ սահմանված կարգի ներկայացնելուց հետո, նշված գործընթացներն արագացնելու որևէ լծակ կամ գործիք չունի: Հաշվի առնելով Ընկերության կամքից անկախ պատճառներով ստեղծված իրավիճակը, Հանձնաժողովում՝ կայացած քննարկման ընթացքում Ընկերության կողմից Նախարարութանն առաջարկվել է երկու՝ Շատվան (Ջաղացաձոր) և Դարանակ բնակավայրերի փոխարեն դիտարկել թվով 3 այլընտրանքային բնակավայրեր, որն ընդունվել և հաստատվել է Նախարարության կողմից և ըստ ձեռք բերված պայմանավորվածութան՝ Ընկերությունը 2 խնդրահարույց, այն է՝ Շատվան և Դարանակ բնակավայրերի փոխարեն, բջջային

կայաններ է կառուցելու 3 այլ՝ Կուտական, Ջիլ և Վահան բնակավայրերում: Մեկ լրացուցիչ կայանի շինարարության համար Ընկերության կողմից անհրաժեշտ ներդրման չափը կկազմի մոտ 40 000 000 (քառասուն միլիոն) դրամ: Ինչպես նշված երեք այլընտրանքային, այնպես էլ Տրետուք բնակավայրում բջջային կայանների կառուցումը Ընկերությունը կավարտի մինչև 2026 թվականի օգոստոսի 31-ը: Հանձնաժողովի որոշումներով սահմանված և լրացուցիչ պարտավորությունների կատարման համար Ընկերության կողմից կատարված ծախսերը (ներառյալ չկառուցված կայանների համար ձեռք բերված նյութերը և սարքավորումների մասով) 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 1 000 000 000 (մեկ միլիարդ) դրամ, իսկ ի սկզբանե նախատեսված աշխատանքներն ավարտելու դեպքում ներդրումն ըստ նախնական գնահատականի կազմելու էր 1 060 000 000 (մեկ միլիարդ վաթսուն միլիոն) դրամ և հաշվի առնելով նաև մեկ լրացուցիչ կայանի կառուցման ծախսերը, ներդրման ընդհանուր գումարը կկազմի 1 100 000 000 (մեկ միլիարդ հարյուր միլիոն) դրամ՝ 1 000 000 000 (մեկ միլիարդ) դրամի փոխարեն: Նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Ընկերությունը շարունակելու է Իշխանասար համայնքում բջջային կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի ձեռք բերման ուղղությամբ ջանքերը և պարտավորվում է շինարարության թույլտվությունն ստանալուց հետո բջջային կայանի կառուցումն ավարտել 2 ամսվա ընթացքում: Հաշվի առնելով Նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածությունները՝ բջջային կապի ծածկույթի ապահովման համար բջջային կայանների կառուցման ընտրված բնակավայրերի ցանկի փոփոխության և լրացուցիչ մեկ բնակավայրում բջջային բազային կայանի կառուցման և դրանց ժամկետների շուրջ, Ընկերությունը խնդրել է կատարել համապատասխան փոփոխություններ Թույլտվության մեջ: Անդրադառնալով հարուցված վարչական վարույթին, Ընկերությունը խնդրել է հաշվի առնել Հանձնաժողովի որոշումների կատարման ապահովմանն ուղղված և Ընկերությունից կախված հնարավոր և ձեռնարկված բոլոր միջոցները, Նախարարության հետ պայմանավորվածություններն ու լրացուցիչ պարտավորությունների ստանձնումն ու այն հանգամանքը, որ Ընկերության գործողություններում առնվազն բացակայել են մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն՝ և կարճել Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը,

է) Հանձնաժողովը 2026 թվականի մարտի 19-ի №ՄՄ/34.2-Ղ4-2/1540-2026 գրությամբ դիմել է Նախարարություն՝ խնդրելով դիրքորոշում Թույլտվություններով սահմանված ժամկետում խնդրո առարկա պարտավորությունների կատարման անհնարինությունը Ընկերության կողմից ներկայացրած օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված լինելու և Ընկերության գործողությունների հետևանք չլինելու վերաբերյալ՝ նկատի ունենալով նաև խնդրո առարկա պարտավորությունների կատարման ապահովմանն ուղղված Ընկերության իրականացրած աշխատանքներն ու ձեռնարկած միջոցները, ինչպես նաև այդ շրջանակում այլընտրանքային 3 (ներառյալ՝ մեկ լրացուցիչ) նոր բնակավայրերում բջջային բազային կայաններ կառուցելու և դրա համար լրացուցիչ ժամկետների անհրաժեշտության հանգամանքը: Նախարարության դիրքորոշումն է հայցվել նաև նշված պարտավորությունների կատարման շրջանակում Նախարարության հետ արդեն իսկ համաձայնեցրած բնակավայրերի ցանկով նախատեսված բնակավայրերից՝ քննարկման ենթակա 4 բնակավայրերի (Շատվան, Դարանակ, Տրետուք և Իշխանասար) փոխարեն 5 բնակավայրերում (այլընտրանքային 3 նոր՝ Կուտական, Ջիլ, Վահան, ինչպես նաև Տրետուք և Իշխանասար) բջջային բազային կայաններ կառուցելու, կառուցման համար անհրաժեշտ լրացուցիչ ժամկետների, և դրանցով պայմանավորված քննարկման առարկա պարտավորությունների կատարման ժամկետը մինչև 2026 թվականի օգոստոսի 31-ը երկարաձգելու հիմնավորվածության վերաբերյալ,

ը) Նախարարությունը 2026 թվականի մարտի 31-ի №ՊՆ/510/4217-2026 գրությամբ տեղեկացրել է, որ 2026 թվականի փետրվարի 23-ին Հանձնաժողովում կայացած քննարկման արդյունքներն ուսումնասիրվել և քննարկվել են Նախարարությունում: Ընկերության Թույլտվություններով սահմանված պարտավորությունների կատարման շրջանակում Նախարարության հետ արդեն իսկ համաձայնեցրած բնակավայրերից՝ քննարկման ենթակա 4 բնակավայրերի մասով Նախարարության հետ համաձայնեցվել է 2 խնդրահարույց բնակավայրերի (Շատվան և Դարանակ) փոխարեն 3 այլընտրանքային նոր բնակավայրերում (Կուտական, Ջիլ և Վահան) բջջային կայաններ կառուցելու հարցը: Նշված 3 այլընտրանքային, ինչպես նաև Տրետուք բնակավայրում բջջային կայանների կառուցումն Ընկերությունը կավարտի մինչև 2026 թվականի օգոստոսի 31-ը՝ զուգընթաց շարունակելով Իշխանասար համայնքում բջջային կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի ձեռքբերման ջանքերը: Նախարարությունը նշել է, որ հաշվի առնելով, որ Թույլտվություններով սահմանված ժամկետում խնդրո առարկա

պարտավորությունների կատարման անհնարինությունը պայմանավորված է Ընկերության կողմից ներկայացված օբյեկտիվ հանգամանքներով և Ընկերության գործողությունների հետևանք չէ, Նախարարությունը, համաձայն է և առարկություններ չունի: Նշված պարտավորությունների կատարման շրջանակում Նախարարության հետ արդեն իսկ համաձայնեցրած բնակավայրերի ցանկով նախատեսված բնակավայրերից քննարկման ենթակա 4 բնակավայրերի (Շատվան, Դարանակ, Տրետուք և Իշխանասար) փոխարեն 5 բնակավայրերում (այընտրանքային 3 նոր՝ Կուտական, Ջիլ, Վահան, ինչպես նաև Տրետուք և Իշխանասար) բջջային բազային կայաններ կառուցելու, կառուցման համար անհրաժեշտ լրացուցիչ ժամկետների, և դրանցով պայմանավորված քննարկման առարկա պարտավորությունների կատարման ժամկետը մինչև 2026 թվականի օգոստոսի 31-ը երկարաձգելու հիմնավորվածության վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ նույնպես առարկություններ չունի՝ առաջարկելով նշված պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի նոյեմբերի 5-ը,

թ) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթ չի հարուցում, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե անձն օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով ենթակա է ազատման պատասխանատվությունից,

ժ) Թույլտվությունների պայմանների 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերի համաձայն՝ կարգավորվող անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի կամ թույլտվության պայմանները չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառել հետևյալ պատժամիջոցները. տույժեր և տուգանքներ, թույլտվության փոփոխում, թույլտվության կասեցում, թույլտվության գործողության դադարեցում: Կարգավորվող անձը չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները հետևանք են ֆորս մաժորի: Թույլտվությունների իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) կարգավորվող անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին. չի գտնվում կարգավորվող անձի վերահսկողության ներքո, կարգավորվող անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված

հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, կարգավորվող անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 օրվա ընթացքում: Թույլտվությունների պայմանների իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, երկարաձգվել սույն լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ Կարգավորվող անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

ժա) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերության և Նախարարության դիրքորոշումների արդյունքներով հաստատվել է, որ Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի և դրանց կատարման անհնարինությունը պայմանավորված է Ընկերության կողմից նշված օբյեկտիվ հանգամանքներով և հետևանք չէ Ընկերության գործողությունների: Մասնավորապես, խնդրո առարկա 4 (Գեղաքունիքի մարզի Շատվան, Տրետուք, Դարանակ և Սյունիքի մարզի Իշխանասար) բնակավայրերում բջջային կայանների շինարարական աշխատանքները սահմանված ժամկետում հնարավոր չի եղել իրականացնել Ընկերության վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներով, քանի որ վերջինից անկախ հանգամանքներով պայմանավորված բջջային կայանների կառուցման գործընթացների շրջանակում համապատասխան թույլտվությունները և վարչական մարմինների որոշումները մինչ օրս չեն ստացվել: Ավելին, Ընկերությունը ձեռնարկել է միջոցներ և ջանքեր խնդրո առարկա հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մասնավորապես, խնդրո առարկա 4 բնակավայրերում հիմնական բջջային կայանների կառուցման գործընթացների շրջանակում համապատասխան թույլտվություններն ու վարչական մարմինների որոշումներն Ընկերությունից անկախ պատճառներով չստանալով պայմանավորված, սահմանված ժամկետում բջջային կայանների շինարարական աշխատանքների իրականացման անհնարինության պարագայում Ընկերությունը ձեռնարկել է քայլեր՝ տվյալ

բնակավայրերում ապահովելով բջջային կապի ծածկույթ (Թույլտվություններով սահմանված ժամկետում՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, այլ կայանների վրա լրացուցիչ սարքավորումների տեղակայման և այլ ժամանակավոր տեխնիկական լուծումներով խնդրո առարկա 4 բնակավայրերում շարժական կապի ծածկույթի ապահովում): Բացի այդ, Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարման համար Ընկերությունը նշել է, որ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կատարել է 1 000 000 000 (մեկ միլիարդ) դրամի ծախս/ներդրում (ներառյալ չկառուցված կայանների համար ձեռք բերված նյութերի և սարքավորումների մասով), ինչպես նաև պարտավորությունների կատարման ապահովման շրջանակում պարտա-վորություններ ստանձնել քննարկման ենթակա 4 բնակավայրերի փոխարեն 5 բնակավայրերում (ներառյալ 3 նոր այլընտրանքային) կառուցելու բջջային բազային կայաններ (որոնց իրականացման արդյունքում Թույլտվություններով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ներդրման ընդհանուր գումարն ըստ նախնական գնահատականի՝ Թույլտվություններով նախատեսված մեկ միլիարդ դրամի փոխարեն կկազմի մեկ միլիարդ հարյուր միլիոն դրամ): Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների մասով կատարված և չկատարված աշխատանքների, գործադրած ջանքերի և ձեռնարկած միջոցառումների վերաբերյալ Ընկերությունը տեղեկացրել է Հանձնաժողովին մինչև Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված ժամկետի ավարտը: Ուստի, հաշվի առնելով վերը նկարագրված պատճառաբանությունները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերությունը չի կարող ենթարկվել պատասխանատվության և Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման: Միաժամանակ, նկատի ունենալով վերոնշյալը և Ընկերության կողմից պարտավորությունների կատարման ապահովման շրջանակում լրացուցիչ պարտավորություններ ստանձնելու հանգամանքն ու այդ պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ ժամկետներն ու այդ կապակցությամբ Նախարարության դիրքորոշումը, ելնելով էլեկտրոնային հաղորդակցության ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների հասանելիության ապահովման նկատառումներից Հանձնաժողովը նպատակահարմար է համարում Թույլտվությունների պայմանների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի նոյեմբերի 5-ը, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և Թույլտվությունների պայմանների 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Կարճել Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունվարի 21-ին Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Հանժնաժողովի 2023 թվականի մարտի 10-ի «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №79-Ա և մարտի 22-ի «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախակա-նությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №88-Ա որոշումների 2-րդ կետերով հաստատված հավելվածների 4-րդ կետերի 4-րդ ենթակետերում «մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2026 թվականի նոյեմբերի 5-ը» բառերով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ապրիլի 2026 թ.